Keck Medicine of USC

KECK MEDICINE OF USC

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՅՍ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ՁԵՐ ՄԱՍԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՅԴ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ՎԵՐԱՆԱՅԵԼ ԱՅՆ:

<u>Ի՞նչ է այս Ծանուցումը ֆ ինչո՞ւ է այն կարևոր:</u>
Օրենքով սահմանված կարգով մենք պարտավորված ենք պահպանել Ձեր նույնականացվող բժշկական և այլ առողջական տեղեկության գաղտնիությունը («առողջական տեղեկություն»), ծանուցել Ձեզ մեր իրավական պարտականությունների և գաղտնիության կանոնների մասին Ձեր առողջական տեղեկության առնչությամբ, և տեղեկացնել Ձեզ Ձեր՝ չպաշտպանված առողջական տեղեկության արտահոսքի դեպքում: Այս Ծանուցման մեջ նկարագրվում են Ձեր իրավունքները և Ձեր առողջական տեղեկությունն օգտագործելու և հայտնելու մեր պարտականությունները, և իրազեկում է Ձեզ այն օրենքների մասին, որոնք հատուկ կանոններ են նախատեսում Ձեր առողջական տեղեկության համար: Keck Medicine of USC-ը պետք է հետևի այս Ծանուցման պայմաններին Ձեր առողջական տեղեկությունն օգտագործելիս կամ հրապարակելիս:

<u>Ո՞ւմ է վերաբերում այս Ծանուցումը:</u>
Այս Ծանուցումը նկարագրում է Keck Medicine of USC-ի հետևյալ կազմակերպությունների գաղտնիության կանոնները, ներառյալ. Keck Hospital of USC, USC Norris Cancer Hospital, USC Verdugo Hills Hospital, USC Arcadia Hospital, USC Care Medical Group և USC Medical Staff Members and Allied Health Professionals, վերը թվարկված կազմակերպությունների աշխատակիցներ, կամավորներ, ուսանողներ և աշխատուժի այլ անդամներ, երբ նրանք ծառայություններ են մատուցում Ձեզ վերը նշված կազմակերպությունների ցանկացած վայրում:

Այս Ծանուցման շրջանակներում սահմանվում է «Keck Medicine of USC» և «մենք», «մեզ» և «մեր» հղումները, որոնք ներառում են վերը նշված բոլոր իրավաբանական անձանց և նրանց աշխատուժի անդամներին:

Սույն Ծանուցումը ուժի մեջ է 2024 թ. մայիսի 1-ից:

Keck Medicine of USC

Ինչպես կարող ենք մենք օգտագործել կամ հրապարակել Ձեր առողջական տեղեկությունը

Բուժման համար. Մենք կարող ենք օգտագործել Ձեր առողջական տեղեկությունը Ձեզ բժշկական օգնություն կամ ծառայություններ տրամադրելու նպատակով: Բժիշկները, բուժքույրերը, տեխնիկները, բժիշկ-ուսանողները կամ հիվանդանոցի այլ անձնակազմը, որոնք ներգրավված են Ձեր խնամքի գործընթացում, կարող են օգտագործել Ձեր առողջական տեղեկությունը: Օրինակ՝ Ձեզ բուժող բժիշկը կարող է սննդաբանին հայտնել Ձեր՝ շաքարախտ ունենալու մասին՝ համապատասխան սնունդ կազմակերպելու նպատակով: Հիվանդանոցի տարբեր բաժանմունքներ կարող են նաև միմյանց տրամադրել Ձեր մասին բժշկական տեղեկությունը՝ համակարգելու Ձեզ անհրաժեշտ տարբեր բաներ, ինչպիսիք են դեղատոմսերը, լաբորատոր անալիզները և ռենտգեն հետազոտությունները: Մենք կարող ենք նաև տրամադրել Ձեր մասին առողջական տեղեկությունը հիվանդանոցից դուրս մարդկանց, որոնք կարող են ներգրավված լինել Ձեր բժշկական խնամքի գործընթացում խնամքի շարունակականության համար, ինչպիսիք են Ձեր Առաջնային խնամքի բժիշկը, հմուտ բուժքույրական հաստատությունները, տնայցով առողջական գործակալությունները կամ ուղղորդումները այլ բուժաշխատողների մոտ:

Վճարման համար. Մենք կարող ենք օգտագործել և հրապարակել Ձեր մասին առողջական տեղեկությունը, որպեսզի Ձեր ստացած բուժման ու ծառայությունների հաշիվը դուրս գրվի Ձեզ, և վճարումը գանձվի Ձեզանից, ապահովագրական ընկերությունից կամ երրորդ կողմից: Օրինակ, մեզ կարող է անհրաժեշտ լինի տեղեկություն տրամադրել Ձեր առողջական ծրագրին Ձեր ստացած ընթացակարգի մասին, որպեսզի Ձեր առողջական ծրագիրը վճարի մեզ կամ փոխհատուցի ընթացակարգի համար : Մենք կարող ենք նաև Ձեր առողջական ծրագրին հայտնել այն բուժման մասին, որը Դուք պատրաստվում եք ստանալ՝ նախնական հավանություն ստանալու կամ որոշելու՝ արդյոք Ձեր ծրագիրը կփոխհատուցի բուժումը: Մենք կարող ենք հիմնական տեղեկություն տրամադրել Ձեր և Ձեր առողջական ծրագրի, ապահովագրական ընկերության կամ վճարման այլ աղբյուրի մասին Keck Medicine of USC-ի այն բուժաշխատողներին, որոնք ներգրավված են Ձեր խնամքի գործընթացում, որպեսզի օգնենք նրանց Ձեզ մատուցած ծառայությունների համար ստանալ վարձատրություն: Այնուամենայնիվ, մենք չենք կարող տեղեկություն տրամադրել Ձեր առողջական ծրագրին վճարումներ կատարելու նպատակով, եթե Դուք խնդրեք մեզ չանել դա, և Դուք ամբողջությամբ վճարում եք ծառայությունների համար:

Առողջական գործառնությունների համար. Մենք կարող ենք օգտագործել և հրապարակել Ձեր մասին առողջական տեղեկությունն առողջական գործառնությունների նպատակով: Տեղեկության կիրառություններն ու տրամադրումն

անհրաժեշտ են USC-ի Keck Medicine-ը կառավարելու և մեր բուժառուներին որակյալ խնամք ապահովելու համար: Օրինակ, մենք կարող ենք օգտագործել առողջական տեղեկությունը մեր բուժումն ու ծառայությունները վերանայելու և Ձեր խնամքի հարցում մեր անձնակազմի արդյունավետությունը գնահատելու համար: Մենք կարող ենք նաև համադրել բազմաթիվ բուժառուների մասին առողջական տեղեկություն՝ գնահատելու, թե ինչ հավելյալ ծառայություններ առաջարկենք: Մենք կարող ենք նաև օգտագործել առողջական տեղեկությունը վերանայման և ուսուցման նպատակով: Մենք կարող ենք նաև համադրել մեր ունեցած առողջական տեղեկությունն այլ հիվանդանոցներից ստացված առողջական տեղեկության հետ՝ համեմատելու մեր աշխատանքը և տեսնելու՝ որտեղ կարող ենք բարելավել մեր առաջարկած խնամքն ու ծառայությունները: Մենք կարող ենք օգտագործել Ձեր առողջական տվյալները չնույնականացված տվյալներ ստեղծելու համար, որտեղից հեռացվում են Ձեր նույնականացվող տվյալները և այսուհետ Ձեզ չեն նույնականացնում:

Կազմակերպված բուժօգնության համաձայնագիր. Մենք մասնակցում ենք այլ մատակարարների հետ կազմակերպված բուժօգնության համաձայնագրին (OHCA): Մենք կարող ենք տեղեկություն հաղորդել OHCA-ի անդամներին բուժման, վճարման և համատեղ բուժօգնության գործողությունների համար:

Տեղեկագիրք. Մենք կարող ենք ներառել Ձեր անունը, գտնվելու վայրը մեր հիվանդանոցներում, ընդհանուր առողջական վիճակը և կրոնական պատկանելությունը բուժառուների տեղեկագրքում առանց Ձեր թույլտվությունը ստանալու, եթե Դուք դեմ չեք տեղեկագրքում ներառվելուն: Տեղեկագրքում առկա տեղեկությունը կարող է հաղորդվել յուրաքանչյուրին, ով կհարցնի Ձեր անունը, կամ հոգևորականության անդամներին: Սակայն, պայմանով, որ Ձեր կրոնական պատկանելությունը կբացահայտվի միայն հոգևորականության անդամներին:

Անհատներ, ովքեր ներգրավված են Ձեր խնամքի գործընթացում կամ վճարում են Ձեր խնամքի համար. Համապատասխան հանգամանքների դեպքում, ներառյալ արտակարգ իրավիճակները, մենք կարող ենք տրամադրել Ձեր առողջական տեղեկությունը ընտանիքի անդամին, այլ հարազատին, ընկերոջը կամ Ձեր կողմից նույնականացված ցանկացած այլ անձի, ով ներգրավված է Ձեր առողջական խնամքի կամ Ձեր բուժօգնության վճարման գործընթացում: Բացի այդ, մենք կարող ենք տրամադրել Ձեր առողջական տեղեկությունը խնամողներին և այլ անձանց, որոնք Ձեզ հետ են կամ գործում են Ձեր անունից (օրինակ՝ դեղատոմս լրացնելու համար): Հնարավոր է, որ մեզ անհրաժեշտ լինի տեղեկացնել այդպիսի անձանց Ձեր գտնվելու վայրի և մեր հաստատության ընդհանուր վիճակի մասին: Եթե Դուք դեմ եք այս բացահայտմանը, խնդրում ենք տեղեկացնել Ձեր՝ Keck Medicine of USC-ի բուժօգնություն

մատուցողին: Եթե Դուք բացակա եք, կամ օգտագործման կամ հրապարակման վերաբերյալ համաձայնելու կամ առարկելու հնարավորությունը գործնականում չի կարող տրամադրվել Ձեր անգործունակության կամ արտակարգ իրավիճակի պատճառով, մենք կարող ենք մասնագիտական դատաքննություն կիրառել՝ որոշելու, թե արդյոք բացահայտումը բխում է Ձեր լավագույն շահերից: Եթե տեղեկությունը տրամադրված է ընտանիքի անդամին, այլ ազգականին կամ ընկերոջը, մենք կհրապարակենք միայն այն տեղեկությունը, որը, ենթադրաբար, անմիջականորեն առնչվում է այդ անձի ներգրավվածությանը Ձեր բուժօգնությանը կամ Ձեր բուժօգնության վճարմանը:

Հանրային առողջապահական գործունեություններ. Մենք կարող ենք հրապարակել Ձեր առողջական տեղեկությունը հետևյալ հանրային առողջապահական գործունեությունների համար.

- Հանրային առողջապահական մարմիններին զեկուցել հիվանդությունը, վնասվածքը կամ հաշմանդամությունը կանխելու կամ վերահսկելու նպատակով;
- Զեկուցել տեղեկությունը ԱՄՆ Սննդի և դեղերի վարչությանն (FDA) իր իրավասության ներքո գտնվող ապրանքների և ծառայությունների մասին;
- Նախազգուշացնել այն անձին, որը կարող է ենթարկվել վարակիչ հիվանդության կամ այլ կերպ կարող է հայտնվել հիվանդության վարակվելու կամ տարածելու վտանգի տակ; կամ
- Ձեր գործատուին տեղեկություն հաղորդելու համար ըստ օրենքների պահանջի մասնագիտական հիվանդությունների և վնասվածքների կամ աշխատավայրում բժշկական հսկողության վերաբերյալ:

Բռնության, անտեսման կամ ընտանեկան բռնության զոհեր. Եթե մենք արդարացիորեն կարծում ենք, որ Դուք բռնության, անտեսման, ընտանեկան բռնության կամ սեռական բռնության զոհ եք, մենք կարող ենք օրենքով պահանջվող Ձեր առողջական տեղեկությունը տրամադրել սոցիալական ծառայությունների գործակալության կամ պետական այլ գործակալության՝ օրենքով լիազորված ստանալու նման հաղորդումներ: Մենք կարող ենք նաև հրապարակել բժշկական տեղեկություն՝ հաղորդելու երեխայի նկատմամբ հայտնի կամ կասկածվող բռնության կամ անտեսման մասին, եթե զեկույցը ներկայացվում է հանրային առողջական մարմնին կամ այլ համապատասխան պետական մարմնի, որն օրենքով լիազորված է ստանալու նման հաղորդումներ:

Առողջության վերահսկման գործողություններ. Մենք կարող ենք տրամադրել Ձեր առողջական տեղեկությունն առողջության վերահսկողության գործակալությանը, որը

պատասխանատու է պետական առողջական ծրագրերի կանոնների պահպանման համար, ինչպիսիք են Medicare-ը կամ Medicaid-ը:

Կառավարության մասնագիտացված գործառույթներ. Օրենքով պահանջվող որոշակի հանգամանքներում մենք կարող ենք օգտագործել և տրամադրել Ձեր առողջական տեղեկությունը հատուկ գործառույթներ ունեցող կառավարության գերատեսչություններին, ինչպիսիք են Միացյալ Նահանգների բանակը: Մենք կարող ենք նաև տրամադրել Ձեր առողջական տեղեկությունը պետական որոշ մարմիններին, եթե Դուք գտնվում եք իրավապահ մարմինների կամ ուղղիչ հաստատության կալանքի տակ:

Իրավապահ մարմինների պաշտոնյաներ, դատական ֆ վարչական վարույթներ. Մենք կարող ենք առողջապահական տեղեկություն տրամադրել ոստիկանությանը կամ իրավապահ մարմինների այլ պաշտոնյաներին որոշակի սահմանափակ, հատուկ հանգամանքներում կամ ի պատասխան դատարանի որոշման կամ այլ իրավական գործընթացի, որը համապատասխանում է գործող օրենսդրությանը: Մենք կարող ենք նաև տրամադրել առողջական տեղեկություն դատական կամ վարչական վարույթի ընթացքում, ինչպես օրինակ՝ ի պատասխան. (ա) դատարանի որոշում; բ) նահանգային կամ դաշնային վարչական գործակալության կամ արտոնագրման խորհրդի կողմից տրված օրինական ուժի մեջ մտած հրաման, և (գ) դատավարություն, հայտնաբերման հարցում կամ այլ օրինական գործընթաց՝ ըստ գործող օրենսդրության:

Դատախազներ, դատաբժիշկներ ֆ հուղարկավորության բյուրոներ. Մենք կարող ենք առողջական տեղեկությունը բացահայտել դատախազին կամ դատաբժշկին օրենքի պահանջով: Մենք կարող ենք նաև հիվանդանոցային բուժառուների մասին առողջական տեղեկություն տրամադրել հուղարկավորության բյուրոներին, երբ անհրաժեշտ է պարտականությունները կատարելու համար:

Օրգանների ֆ հյուսվածքների նվիրատվություն. Մենք կարող ենք առողջական տեղեկություն տրամադրել կազմակերպություններին, որոնք աջակցում են օրգանների, աչքի կամ հյուսվածքների նվիրատվության, հերթագրման կամ փոխպատվաստման հարցում:

Առողջություն կամ անվտանգություն. Մենք կարող ենք առողջական տեղեկություն տրամադրել Ձեր առողջությանը և անվտանգությանը կամ հանրության կամ այլ անձի առողջությանն ու անվտանգությանը սպառնացող լուրջ վտանգը կանխելու նպատակով:

Keck Medicine of USC

Առողջական տեղեկության փոխանակում. Մենք, այլ բուժաշխատողների հետ համատեղ, կարող ենք մասնակցել մեկ կամ մի քանի առողջական տեղեկության փոխանակմանը (HIEs): HIE-ը համայնքային տեղեկատվական համակարգ է, որն օգտագործվում է մասնակից բուժաշխատողների կողմից Ձեր մասին առողջական տեղեկությունը բուժման նպատակով փոխանցելու համար: Առողջապահության ոլորտի տարբեր հաստատությունները, որոնք բուժում են Ձեզ և մասնակցում են HIE-ին, կարող են էլեկտրոնային եղանակով կիսվել Ձեր առողջական տեղեկությամբ: HIE-ը թույլ է տալիս Ձեր բուժաշխատողներին ունենալ այն ամբողջ տեղեկությունը, որն անհրաժեշտ է Ձեզ արդյունավետ բուժելու համար, օրինակ՝ լաբորատոր արդյունքները, նախնական ախտորոշումը և ընթացիկ դեղորայքը: Եթե Դուք չեք ցանկանում, որ Ձեր առողջական տեղեկությունը կիսվի HIE-ում, Դուք կարող եք ընտրել՝ լրացնելով *Keck Medicine of USC-ի HIE-ի Բուժառուի հրաժարման ձևաթուղթը*:

Հետազոտության համար. Որոշ հանգամանքներում մենք կարող ենք օգտագործել և հայտնել Ձեր առողջական տեղեկությունը հետազոտությունների նպատակով: Օրինակ, մենք կարող ենք Ձեր առողջական տեղեկությունը հայտնել Keck Medicine of USC-ի հետազոտողներին, որոնք պատրաստվում են անցկացնել հետազոտական նախագիծ, որի նպատակն է կապ հաստատել Ձեզ հետ՝ պարզելու, թե արդյոք հետաքրքրված եք մասնակցել ուսումնասիրությանը: Ընդհանուր առմամբ, հետազոտական նախագծերը ենթակա են հաստատման հատուկ գործընթացի: Այս գործընթացը գնահատում է առաջարկված հետազոտական նախագիծը և օգտագործելը առողջական տեղեկությունը՝ փորձելով հավասարակշռել հետազոտության կարիքները բուժառուների կարիքների հետ իրենց առողջական տեղեկության գաղտնիության համար: Նախքան հետազոտությունների համար առողջության մասին տեղեկություն օգտագործելը կամ հայտնելը, նախագիծը հավանության կարժանանա հետազոտության հաստատման գործընթացի միջոցով:

Սահմանափակ տվյալների հավաքածուներ. Մենք կարող ենք տրամադրել Ձեր նույնականացվող առողջական տեղեկությունը (չներառելով Ձեր անունը, հասցեն, սոցիալական քարտի համարը կամ այլ հիմնական տվյալներ) հետազոտության, հանրային առողջության կամ առողջապահական գործողությունների համար, բայց միայն այն դեպքում, եթե այդ տվյալները ստացող կողմը ստորագրի տեղեկությունը պաշտպանելու համաձայնություն և չօգտագործի այն Ձեզ նույնականացնելու կամ Ձեզ հետ կապ հաստատելու համար:

Զարգացման ֆ հանգանակության միջոցառումներ. Մենք կարող ենք կապվել Ձեզ հետ Keck Medicine of USC-ի կարևոր գործունեությանն աջակցելու համար ներդրում խնդրելու համար: Հանգանակության համար մենք կարող ենք մեր անձնակազմին տրամադրել Ձեր

մասին ժողովրդագրական տեղեկություն (օրինակ՝ Ձեր անունը, հասցեն և հեռախոսահամարը), մեր կողմից Ձեզ տրամադրված բուժօգնության ամսաթվերը, ծառայության կամ բուժող բժշկի բաժանմունքի մասին տեղեկություն, արդյունքների մասին տեղեկություն կամ առողջության ապահովագրության կարգավիճակ՝ առանց Ձեր գրավոր թույլտվության: Մենք կարող ենք նաև Ձեր մասին նման տեղեկություն տրամադրել սերտորեն համագործակցող հիմնադրամներին, որոնք օգնում են մեզ մեր զարգացման միջոցառումների հարցում: Սակայն մենք չենք հայտնի Ձեր ախտորոշումը կամ բուժումը, եթե մենք չունենք դա անելու Ձեր գրավոր լիազորությունը:

Եթե Դուք չեք ցանկանում, որ Ձեզ հետ կապվեն Keck Medicine of USC-ի դրամահավաքի հարցերով, Դուք պետք է գրավոր տեղեկացնեք մեզ՝ գրելով KeckMedOut@usc.edu: Եթե չեք ցանկանում, որ Ձեզ հետ կապվեն USC Arcadia Hospital-ի դրամահավաքի աշխատանքների հարցով,Դուք պետք է գրավոր տեղեկացնեք մեզ՝ գրելով UAH-Foundation@med.usc.edu:

Մարքեթինգային գործունեություն. Մենք կարող ենք իրականացնել հետևյալ միջոցառումներն առանց Ձեր լիազորագիրը ստանալու.

- Տրամադրել Ձեզ մարքեթինգային նյութեր անձամբ հանդիպման ժամանակ,
- Տալ Ձեզ անվանական արժեքով գովազդային նվեր,
- Ուղարկել դեղորայքի պաշաներնը լրացնելու հիշեցումներ կամ այլ կերպ հաղորդակցվել դեղորայքի կամ կենսաբանական նյութերի մասին, որոնք տվյալ պահին նշանակված են Ձեզ, այնքան ժամանակ, քանի դեռ ցանկացած վճար, որը մենք ստանում ենք կապի ապահովման համար, արդարացիորեն առնչվում է մեր ծախսերի հետ:
- Պատմել Ձեզ USC-ի սեփական առողջապահական արտադրանքի և ծառայությունների մասին

Եթե մենք ընդունենք վճարումներ այլ կազմակերպություններից կամ անհատներից՝ նրանց առողջապահական ապրանքների կամ ծառայությունների մասին Ձեզ պատմելու դիմաց, մենք կխնդրենք Ձեր լիազորագիրը, բացառությամբ վերը նկարագրվածի կամ երբ հաղորդակցությունները թույլատրված են օրենքով՝ առանց Ձեր թույլտվության: Մենք կխնդրենք Ձեր թույլտվությունն օգտագործելու Ձեր առողջական տեղեկությունը ցանկացած այլ մարքեթինգային գործունեության համար: Նաև, ժամանակ առ ժամանակ Keck Medicine of USC-ը նամակներ է ստանում բուժառուներից, նրանց ընտանիքի անդամներից և ընկերներից, որոնք նկարագրում են Keck Medicine of USC-ում ստացած փորձն ու խնամքը: Հնարավորության դեպքում մենք կիսվում ենք այս նամակներով մեր Keck Medicine of USC-ի աշխատակիցների և բուժառուների հետ:

Նախքան Ձեր նամակով կիսվելը, մենք նամակից կհեռացնենք Ձեր անունը և այլ նույնականացվող տեղեկություն Ձեր գաղտնիությունը պաշտպանելու նպատակով:

Աշխատողների փոխհատուցում. Մենք կարող ենք տրամադրել առողջական տեղեկությունը, ինչպես լիազորված է և որքանով դա անհրաժեշտ է օրենքներին համապատասխանելու համար աշխատողների փոխհատուցման վերաբերյալ կամ նմանատիպ այլ ծրագրեր կամ ինչպես պահանջվում է աշխատավայրում վնասվածքների և հիվանդությունների հետ կապված օրենքներով:

Բիզնես ասոցիացիաներ. Մենք կարող ենք պայմանագիր կնքել երրորդ կողմի հետ, որպեսզի կատարենք որոշակի ծառայություններ մեզ համար, օրինակ՝ վճարման, պատճենահանման, խորհրդատվական կամ այլ ծառայություններ: Այս երրորդ կողմի ծառայություններ մատուցողները, որոնք կոչվում են Բիզնես գործընկերներ, մեզ համար ծառայություններ մատուցելու նպատակով կարող են ստանալ Ձեր առողջական տեղեկությունը: Դրանք պահանջվում են պայմանագրով և օրենքով, որպեսզի պաշտպանեն Ձեր առողջական տեղեկությունը և միայն օգտագործեն ու տրամադրեն մեզ համար իրենց ծառայությունները կատարելու անհրաժեշտության դեպքում:

Ըստ օրենքի պահանջի. Մենք կարող ենք հայտնել առողջական տեղեկություն, երբ պահանջվում է դա անել ցանկացած այլ օրենքով, որն արդեն չի նշվում նախորդ կատեգորիաներում:

Նշում այլ սահմանափակումների մասին. Կալիֆորնիայի օրենքը կարող է ավելի խիստ պահանջներ ներկայացնել, թե ինչպես ենք մենք օգտագործում և տրամադրում առողջական տեղեկությունը, ի տարբերություն HIPAA-ի: Եթե կիրառվեն ավելի խիստ պահանջներ կամ սահմանափակումներ, մենք կօգտագործենք և կտրամադրենք Ձեր առողջական տեղեկությունը միայն այդ ավելի խիստ պահանջներին համապատասխան:

Որոշ դեպքերում Ձեր առողջական տեղեկությունը կարող է ենթարկվել սահմանափակումների, որոնք կարող են սահմանափակել կամ կանխել այս ծանուցման մեջ նկարագրված որոշ կիրառումներ կամ տրամադրումներ: Օրինակ, կան հատուկ սահմանափակումներ տեղեկության որոշակի կատեգորիաների օգտագործման կամ բացահայտման համար՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ստուգման արդյունքներ, հոգեկան առողջության վիճակի բուժում և թմրանյութերի օգտագործման խանգարում:

<u>Ձեր գրավոր լիազորությունը պահանջող կիրառումներ ֆ բացահայտումներ</u>

Ցանկացած նպատակով, բացի սույն Ծանուցման մեջ նկարագրվածներից, մենք կարող ենք օգտագործել կամ տրամադրել Ձեր առողջական տեղեկությունը միայն այն դեպքում,

երբ Դուք մեզ տալիս եք դա կատարելու թույլտվություն գրավոր լիազորագրի միջոցով: Այդ նպատակով Keck Medicine of USC-ը մշակել է *Պաշտպանված առողջապահական տեղեկատվության օգտագործման և բացահայտման թույլտվություն* ձևաթուղթը («Keck Medicine Authorization»): Եթե Դուք ստորագրում եք տեղեկության տրամադրման թույլտվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ մենք արդեն ապավինել ենք դրա վրա, կարող եք հետագայում չեղարկել այդ թույլտվությունը կամ դադարեցնել Ձեր առողջական տեղեկության հետագա օգտագործումն ու տրամադրումը: Եթե ցանկանում եք չեղյալ համարել նախնական թույլտվությունը, Դուք պետք է Ձեր հարցումը գրավոր ներկայացնեք Առողջապահության պահանջների համապատասխանության գրասենյակ:

Պաշտպանված առողջական տեղեկության վաճառք. Մենք չենք կատարի որևէ տրամադրում, որը համարվում է Ձեր պաշտպանված առողջական տեղեկության վաճառք առանց Ձեր գրավոր թույլտվության, եթե այդ բացահայտումը նախատեսված չէ օրենքով թույլատրված նպատակով:

<u>Ձեր իրավունքները Ձեր առողջական տեղեկության վերաբերյալ</u>

Ձեր առողջական տեղեկությունը ստանալու համար դիմելու իրավունք. Դուք իրավունք ունեք ստուգել և պահպանել բուժառուի գրանցումների պատճենը, որոնք մենք պահպանում ենք Ձեր բուժման և խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Մուտք ստանալու բոլոր խնդրանքները պետք է կատարվեն գրավոր: Սահմանափակ հանգամանքներում մենք կարող ենք մերժել Ձեզ մուտք գործել Ձեր գրառումները: Եթե ցանկանում եք մուտք գործել Ձեր գրառումները, ապա կարող եք ստանալ *Առողջական տեղեկության հասանելիության բուժառուի հարցում* ձևաթուղթը Ձեր տեղական ծառայությունների կայքից կամ առցանց՝ KeckMedicine.org: Լրացված ձևաթուղթը կարող է ներկայացվել փոստով, ֆաքսով կամ անձամբ Keck Medicine of USC-ի Առողջական տեղեկությունների առավարման բաժանմունք: Եթե Դուք պատճեններ եք խնդրում, մենք Ձեզանից խելամիտ գումար կգանձնենք դրանց համար: Մենք նաև կգանձնենք Ձեզանից մեր փոստային ծախսերի համար, եթե խնդրեք, որ մենք Ձեզ փոստով ուղարկենք պատճենները: Եթե Դուք անչափահասի ծնող կամ օրինական խնամակալ եք, անչափահասի բժշկական արձանագրության որոշ հատվածներ կարող են հասանելի չլինել Ձեզ Կալիֆորնիայի օրենքով:

Keck Medicine of USC-ը նաև առաջարկում է ստանալ Ձեր առողջական տեղեկությունը myUSCchart բուժառուի պորտալի միջոցով: MyUSCchart-ը թույլ է տալիս Ձեզ հաղորդակցվել Ձեր բժշկի կամ խնամակալական թիմի հետ, մուտք գործել թեստի արդյունքներ և խնդրել դեղատոմսի թարմացումներ և պայմանավորվածություններ Ձեր

անձնական համակարգչից կամ սմարթֆոնից: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել (800) USC-CARE (800-872-2273) կամ այցելել KeckMedicine.org:

Դուք իրավունք ունեք խնդրել, որ մենք Ձեր կողմից պահանջվող առողջական տեղեկությունը տրամադրենք կա՛մ Ձեզ, կա՛մ Ձեր կողմից նշանակված այլ անձի: Եթե Դուք խնդրում եք մեզ տրամադրել Ձեր առողջական տեղեկությունը Ձեր կողմից նշանակված մեկ այլ անձի, Դուք պետք է հստակ գրավոր նշեք նշանակված անձին և որտեղ մենք պետք է ուղարկենք Ձեր առողջական տեղեկության պատճենը և ստորագրենք Ձեր հարցումը:

Ձեր առողջական տեղեկության մեջ փոփոխություններ պահանջելու իրավունք. Դուք իրավունք ունեք պահանջել, բացառությամբ այն դեպքերի, երբ բուժումը կատարվում է Ուսանողների առողջության ոլորտում, որ մենք փոփոխենք Ձեր առողջական տեղեկությունը, որը պահպանվում է Ձեր բժշկական գրառումների ֆայլում կամ վճարային փաստաթղթերում: Եթե ցանկանում եք փոփոխել Ձեր գրառումները, խնդրում ենք ձեռք բերել և լրացնել Պաշտպանված առողջական տեղեկության փոփոխելու հայցի ձևաթուղթը*Ձեր տեղական ծառայության կայքից կամ առցանց KeckMedicine.org-ով:* Դուք կարող եք Ձեր լրացրած հայցը ներկայացնել Keck Medicine of USC-ի Առողջական տեղեկությունների կառավարման բաժին: Մենք կհնազանդվենք Ձեր խնդրանքին, եթե չհավատանք, որ այն տեղեկությունը, որը կփոխվեր, արդեն իսկ ճշգրիտ է և ամբողջական կամ կիրառելի են այլ հատուկ հանգամանքներ: Մենք կարող ենք մերժել Ձեր խնդրանքը, սակայն Ձեզ գրավոր բացատրություն կտանք, եթե մենք դա անենք: Դուք կարող եք գրավոր դիմել մեզ: Եթե մենք մերժենք Ձեր գրառումը փոփխելու խնդրանքը, Ձեր խնդրանքի պատճենը կարող է ավելացվել Ձեր գրառումին, եթե Դուք մեզ ուղղորդեք այն ներկայացնելու:

Նույնիսկ եթե մենք մերժում ենք փոփոխության Ձեր խնդրանքը, Դուք իրավունք ունեք ներկայացնել գրավոր լրացում, որը չպետք է գերազանցի 250 բառը, Ձեր գրառման ցանկացած կետի կամ հայտարարության վերաբերյալ, որը Դուք կարծում եք՝ թերի է կամ սխալ: Եթե Դուք հստակ գրավոր նշում եք, որ ցանկանում եք՝ լրացումը դառնա Ձեր բժշկական արձանագրության մաս, մենք այն կկցենք Ձեր գրառումներին և այն կներառենք ամեն անգամ, երբ մենք բացահայտենք այն կետը կամ հայտարարությունը, որը Դուք կարծում եք՝ թերի է կամ սխալ:

Ձեր առողջական տեղեկության տրամադրման հաշվապահական հաշվառման իրավունք. Գրավոր դիմումի հիման վրա Դուք կարող եք ձեռք բերել մեր կողմից արված առողջական տեղեկության տրամադրման ցանկ (հաշվառում)՝ պայմանով. ա) այդպիսի ժամանակահատվածը չի գերազանցում վեց տարին, և բ) չեն ընդգրկվի բուժման,

վճարման, բուժսպասարկման և որոշ այլ նպատակներով կատարված տեղեկության տրամադրումները: Եթե տասներկու (12) ամսվա ընթացքում մեկից ավելի անգամ հաշվետվություն եք հայցում, մենք Ձեզանից կգանձենք ողջամիտ գումար: Մենք Ձեզ նախապես կտեղեկացնենք ծախսերի մասին. Դուք կարող եք ընտրել հետ կանչել Ձեր հարցումն այդ պահին՝ նախքան որևէ ծախս առաջանալը:

Եթե ցանկանում եք հաշվետվություն խնդրել, խնդրում ենք ստանալ *Հաշվետվություն խնդրելու* ձևաթուղթը ցանկացած Keck Medicine of USC-ի ծառայության վայրից կամ առցանց www.KeckMedicine.org և Ձեր ստորագրված խնդրանքը ներկայացնել Keck Medicine of USC-ի Առողջական տեղեկատվության կառավարման վարչություն:

Ձեզ տրամադրվող տեղեկությունը ստանալու վերաբերյալ հարցման իրավունք. Դուք կարող եք դիմել, և մենք կփորձենք բավարարել ցանկացած ողջամիտ գրավոր խնդրանք, որ Դուք ստանաք առողջական տեղեկությունը հաղորդակցություն այլընտրանքային միջոցներով կամ այլ հասցեում կամ վայրում: Գաղտնի հաղորդակցություն խնդրելու համար ձեռք բերեք *Այլընտրանքային միջոցներով կամ այլընտրանքային վայրերով գաղտնի հաղորդակցության հարցման* ձևաթուղթը և ներկայացրեք այն Առողջապահության պահանջների համապատասխանության գրասենյակ:

Հատուկ ծանուցում էլ.փոստին. Դուք կարող եք հարմար գտնել հաղորդակցվել Keck Medicine of USC-ի հետ, այդ թվում Ձեր բուժման թիմի անդամի հետ, էլեկտրոնային փոստով: Մենք կարող ենք հաղորդակցվել Ձեզ հետ էլեկտրոնային փոստով, եթե Դուք այդպես եք խնդրում կամ եթե Դուք նախաձեռնում եք էլեկտրոնային հաղորդակցություն մեզ հետ: Սակայն հնարավոր է, որ էլեկտրոնային փոստով հաղորդակցությունը գաղտնագրված և ապահով չլինի: Keck Medicine of USC-ը չի կարող պաշտպանել Ձեր առողջական տեղեկության գաղտնիությունը, մինչ այն փոխանցվում է ինտերնետով և չի կարող կանխել Ձեր առողջական տեղեկության ուղարկումը երրորդ կողմերին, երբ այն ուղարկվել է:

Ձեր առողջական տեղեկության օգտագործման վերաբերյալ լրացուցիչ սահմանափակումներ պահանջելու իրավունք. Դուք կարող եք խնդրել, որ մենք սահմանափակենք Ձեր առողջական տեղեկության օգտագործումը կամ տրամադրումը: Նման լրացուցիչ սահմանափակումների մասին բոլոր խնդրանքները պետք է կատարվեն գրավոր կերպով: Թեև մենք ուշադիր կքննարկենք լրացուցիչ սահմանափակումների խնդրանքը, մեզանից չի պահանջվում համաձայնել պահանջվող սահմանափակմանը, բացառությամբ այն դեպքերի, որոնք սահմանափակելու են տեղեկության տրամադրումը առողջապահական ծրագրին, այն դեպքերում, երբ Դուք ամբողջությամբ

վճարել եք ծառայության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ տրամադրումը պահանջվում է օրենքով կամ որոշվում է բուժման նպատակներով: Keck Medicine of USC-ը Ձեզ կտրամադրի գրավոր պատասխան:

Եթե ցանկանում եք սահմանափակումներ պահանջել, ապա Ձեր խնդրանքը պետք է գրավոր ջևով ուղարկեք Keck Medicine of USC-ի Առողջական տեղեկատվության կառավարման բաժին: Ձեր խնդրանքով, Դուք պետք է ասեք մեզ.

1. Որ տեղեկությունն եք ցանկանում սահմանափակել,
2. Անկախ նրանից, ցանկանում եք սահմանափակել մեր կողմից օգտագործումը, տրամադրումը, թե՝ երկուսն էլ; և
3. Ում վրա եք ցանկանում կրառել սահմանափակումները, օրինակ, տրամադրում Ձեր ամուսնուն:

Խախտման մասին ծանուցում ստանալու իրավունք. Դուք իրավունք ունեք ծանուցում ստանալ մեր կողմից, եթե խախտում հայտնաբերենք Ձեր՝ ոչ ապահով պաշտպանված առողջական տեղեկության մեջ:

Սույն ծանուցման թղթային օրինակի իրավունքը. Դիմելով՝ Դուք կարող եք ձեռք բերել այս Ծանուցման թղթային օրինակը, նույնիսկ եթե համաձայնել եք նման տեղեկություն ստանալ էլեկտրոնային եղանակով :

<u>Սույն ծանուցման պայմանները փոխելու իրավունք</u>

Մենք կարող ենք ցանկացած ժամանակ փոխել սույն Ծանուցման պայմանները: Եթե մենք փոխենք այս Ծանուցումը, մենք կարող ենք նոր ծանուցման պայմանները կիրառել բոլոր այն առողջապահական տեղեկությունների վրա, որոնք մենք պահում ենք, ներառյալ ցանկացած տեղեկություն, որը ստեղծվել կամ ստացել է նախքան նոր Ծանուցում հրապարակելը: Եթե մենք փոխենք այս ծանուցումը, մենք կտեղադրենք վերանայված Ծանուցումը մեր գործնական ոլորտներում և մեր կայքում www.keckmedicine.org: Դուք կարող եք նաև ստանալ ցանկացած վերանայված ծանուցում՝ կապ հաստատելով Առողջապահության պահանջների համապատասխանության գրասենյակի հետ:

<u>Լրացուցիչ տեղեկություն ստանալու իրավունք, Բողոքներ</u>

Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություն ստանալ Ձեր գաղտնիության իրավունքների մասին, մտահոգված եք, որ մենք խախտել ենք Ձեր գաղտնիության

իրավունքը կամ համաձայն չենք այն որոշման հետ, որը մենք կայացրել ենք առողջական տեղեկության հասանելիության վերաբերյալ, ապա կարող եք դիմել Office of Healthcare Compliance at 1510 San Pablo St, 6th Floor, Los Angeles, CA 90033, 323-442-8588 կամ Privacy@med.usc.edu: Դուք կարող եք նաև գրավոր բողոք ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդկային ծառայությունների վարչության քարտուղարին:

Մենք վրեժխնդիր չենք լինի կամ քայլեր չենք ձեռնարկի Ձեր դեմ, եթե Դուք բողոք ներկայացնեք մեզ կամ Քարտուղարին:

Keck Medicine of USC

KECK MEDICINE OF USC
ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Այս ծանուցումն ուժի մեջ է 2024 թ. մայիսի 1-ից:

Խնդրում ենք ստորֆ ստորագրել ֆ նշել ամսաթիվը, ինչը կվկայի, որ Դուք ստացել եք այս ծանուցման պատճենը: Ձեր ստորագրությունը պարզապես հաստատում է, որ Դուք ստացել եք այս ծանուցման պատճենը:

_____

Անունը՝ տպատառ (ազգանուն, անուն, միջնանվան սկզբնատառ)

_____

Ստորագրություն

_____

Ամսաթիվ

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ

ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՄ